Հայերուս թուքը

Դուն խելօք, հաշուով
վաճառական ես,
Միւլք, փող ու ապրանք, կասեն՝
շատ ունես. -
Բայց թէ փողէդ շահ չունի
ՀԱՅԱՍՏԱՆ,
Թքել ենք քու ալ, փողիդ ալ
վրան:

Քաջ ես, լսել ենք, ինքդ
մեծաւոր,
Անուն յաղթողի ունես
փառաւոր.
Բայց թէ թրէդ շահ չունի
ՀԱՅԱՍՏԱՆ,
Թքել ենք քու ալ, թրիդ ալ վրան:

Ի վերուստ քանքար քեզի
տուած է,
Հեղինակ անունդ աշխարհի
փռուած է.
Բայց թէ գրչէդ շահ չունի
ՀԱՅԱՍՏԱՆ,
Թքել ենք քու ալ, գրչիդ ալ
վրան:

զարդարեցար,
Հզօր իշխանի սիրելին դարձար.
Բայց թէ մտքէդ շահ չունի
ՀԱՅԱՍՏԱՆ,
Թքել ենք քու ալ, մտքիդ ալ
վրան:

Բանուկ ու ճարտար դուն ունիս
ձեռքեր,
Շատ կը յօրինես թանգագին
բաներ.
Բայց թէ ձեռքէդ շահ չունի
ՀԱՅԱՍՏԱՆ,
Թքել ենք քու ալ, ձեռքիդ ալ
վրան:

Երկինք շնորհեցին քեզ լեզու
ճարտար,
Քարոզչի ստացար հռչակ ու
հանճար.
Բայց թէ լեզուէդ շահ չունի
ՀԱՅԱՍՏԱՆ,
Թքել ենք քու ալ, լեզուիդ ալ
վրան:

Մեծ ուսում առիր, եղար
գիտնական,
Գովքովդ լցուած է մարդոց
բերան.
Թէ ուսումդ շահ չունի
ՀԱՅԱՍՏԱՆ,
Թքել ենք քու ալ, ուսմանդ ալ
վրան:

Կու տամ քեզ պատիւ,
կունենաս դու յարգ,
Ու կը դնեմ քեզ ազնիւ մարդոց
կարգ,
Երբ օրօրանէդ մինչեւ
գերեզման
Միակ ձգտմունքդ լինի
ՀԱՅԱՍՏԱՆ:

Ռաֆայէլ Պատկանեան